ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Գ. ԵՐԻՑՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Երիցյան.

Ի պատասխան Ձեր 14.06.2019թ. հ.01/275 գրության՝ տեղեկացվում է, որ անգլիական «Դաբլյու Վայ Ջի Ինթերնեյշնլ լիմիթիդ» խորհրդատվական ընկերության կողմից ներկայացված հանրային տրանսպորտի նոր ցանցը մշակվել է միջազգային չափանիշների համաձայն: Ներկայացված չափորոշիչները մշակվել են՝ հիմնվելով ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի թիվ 107 կանոնակարգի պահանջների և 2010թ.-ին ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրերի կողմից պատրաստված «Հաշմանդամություն ունեցող անձանց հանրային տրանսպորտի փոխադրումների մատչելիության միջազգային լավագույն փորձի վերանայում» փաստաթղթի հիման վրա:

Մասնավորապես.

1) Երևան քաղաքի հանրային տրանսպորտի բարեփոխումների նոր ծրագրում հաշվի են առնվել հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները: Համաձայն ներկայացված ծրագրի՝ բոլոր տրանսպորտային միջոցները պետք է հասանելի լինեն սահմանափակ կարողություններով անձանց համար:

2) Տրանսպորտային միջոցները հարմարեցված են լինելու ինչպես սայլակ օգտագործող անձանց համար, այնպես էլ լսողության և տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար: Նախատեսվում է հանրային տրանսպորտի նոր երթուղային ցանցում շահագործվող տրանսպորտային միջոցները համալրել կանգառների ազդարարման ձայնային և էլեկտրոնային համակարգերով, անվասայլակների վերելակային համակարգով կամ թեքահարթակով, հաշմանդամների անվասայլակների համար հատուկ տեղերով:

3) Նախատեսվում է կազմակերպել վերապատրաստումներ ողջ անձնակազմի համար և սահմանել վարորդների հաստատված վարքագծային կանոններ:

4) Ներդրված տեխնիկական միջոցները՝ սահմանափակ կարողություններով անձանց հնարավորություն կընձեռեն ինքնուրույն օգտվել հանրային տրանսպորտից:

5) Ժամանակակից էլեկտրոնային վճարման և տոմսային համակարգերը, որոնք ներդրվելու են նոր տրանսպորտային ցանցում, հասանելի են լինելու նաև տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար:

6) Հանրային տրանսպորտի բարեփոխումների ծրագրով նախատեսվում է որոշակի սոցիալական խմբերին՝ այդ թվում հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրել զեղչեր:

7) Նախատեսվում է, որ կանգառները նույնպես պետք է հարմարեցված լինեն շարժողական համակարգի սահմանափակումներ ունեցող ուղևորների համար:

Միաժամանակ տեղեկացվում է, որ ներկայացված չափորոշիչները ենթակա են հաստատման Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի բարեփոխումների մասնագիտական աշխատանքային խմբի կողմից:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ**